## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնք,

հեռ. 0234 4 00 00,0234 4 00 77,էլ.հասցե՝ araratgyuxapetaran@mail.ru /

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մարտի 2014թվականի N 8

## ԲՅՈՒՋԵԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով

Ավագանին որոշեց

Կատարել հետևյալ փոփոխությունը՝

1. Ելնելով անհրաժեշտությունից տնտեսական դասակարգման 4.1.1.51 ընդհանուր բնույթի տնտեսական ծախսային ծրագրի 4657 այլ կապիտալ դրամաշնորհներ հոդվածից պակասեցնել 400.000 /չորս հարյուր հազար/ դրամ՝ ավելացնել կարիքավոր ընտանիքների բարձրագույն կրթություն ստացող երեխաներին օգնություն ծախսային 9.4.1.51 ծրագրի 4729 այլ նպաստ բյուջեից /ուսման վարձ/ հաստատելով վերջինս 1.200.000/մեկ միլիոն երկու հարյուր հազար/ դրամ:
2. Հանգիստ, մշակույթ, կրոն 8.5.1.51 ծախսային ծրագրի 4269 հատուկ նպատակային նյութեր հոդվածը 3.000.000 / երեք միլիոն / դրամ զրոյացնել, ավելացնել գումարը նույն ծախսային ծրագրի 4239 ընդհանուր բնույթի ծառայություններ հոդվածին՝ հաստատելով վերջինս 5.000.000/ հինգ միլիոն/ դրամ:
3. Հուշարձան համալիրում ընթացիկ վերանորոգման աշխատանքներ կատարելու համար վարչական բյուջեի պահուստի 11.1.2.51 ծրագրի 4891 հոդվածից պակասեցնել 700.000/ յոթ հարյուր հազար/ ավելացնել տնտեսական դասակարգման 4.1.1.51 ընդհանուր բնույթի տնտեսական ծրագրի 4251 շենք. շինությունների ընթացիկ նորոգում հոդվածին. վերջինս հաստատելով 1.200.000 /մեկ միլիոն երկու հարյուր հազար/ դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԿՅԱՆ ԻԳՈՐ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԵՐԻՑՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ
6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՂԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Գյուղապետ ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

# ԱՐԱՐԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ գ. համայնք
Հեռ. 0234 4 00 00,0234 4 00 77 araratgyuxapetaran@mail.ru , araratg.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մարտի 2014թվականի N 7

### ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ կետով և հիմք ըն դունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014թ փետրվարի 10-ի թիվ 85-Ա որոշումը

Ավագանու կողմից երիտասարդական խորհրդում ոչ պետական հատվածը ներկայացնելու համար առաջադրվեցին երկու թեկնածուներ, սակայն հաշվի առնելով թեկնածուների երիտասարդական քաղաքականության բնագավառում փորձի, ծրագրերի մշակման , իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացությունների պակասը, ինչպես նաև երիտասարդական քաղաքականության բնագավառում գործնական աշխատանքի փորձը

Ավագանին որոշեց.

ՀՀ Արարատի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդում Արարատի մարզի, Արարատ գյուղական համայնքի ոչ պետական հատվածը ներկայացնելու համար առաջադրել ավագանու անդամ Իգոր Ավակյանի թեկնածությունը: Իգոր Ավակյանի թեկնածությունը ընդունվեց միաձայն:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՎԱԿՅԱՆ ԻԳՈՐ
2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ
3. ԵՐԻՑՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ՄԱԼԽԱՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՇԱԿ
6. ՄԱՐԳԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ
7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ

Գյուղապետ ԿԱՐԵՆ ՂԱԶԱՐՅԱՆ